

Երեւոյն



8

(179)
Օգոստոս, 2021

ՀՈՎԻԿ ՎԱՐՂՈՒՄՅԱՆԻ «ԿԱՆԹԵՂ» ՎԵՂԸ՝ ՈՐՂԵՍ ԱԶՍԱՄԱՐՏԻ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրացել Հայրենիքի տանիքը
Պահանտոցի էինք
խաղում...
Մի օր էլ սայթաքեցինք,
գլորվեցինք
ցած-
Բարձր է տանիքը
Հայրենիքի.
Մենք դեռ գլորվում ենք...

Այս պատերազմը սկսվեց այն ժամանակ, երբ հասարակությունը համոզուածեց նախորդ պատերազմի հետոսների նկատմամբ պետական հաշվեհարդարը: Եվ պատերազմը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ հասարակությունը համոզուած է այդ հաշվեհարդարի շարունակումը: Քանի դեռ զենք չտեսածները հոխորտում են հաղթանակը կերտողների վրա: Քանի դեռ մեր փշուր-փշուր արված սրբազան հայրենիքը սկուտեղի վրա հրամցվում է թշնամուն, և հասարակությունը աչք է փակում այս ամենի վրա:

Բայց սա այն հասարակությունն է, որն ընդամենը մեկ սերունդ առաջ հիշեցնում էր բռնուցք՝ մերքին ու արտաքին թշնամու գլխավերևում ճոճվող...
Եվ խոնարհվում էր մեր հազարավոր խոնարհված դրոշների առջև: Նրանք խոնարհվեցին հանուն արժանապատվության: Նրանք տվեցին իրենց ամենաթանկը, որ մենք ընտրեցինք ամենաեթա՞ն ճանապարհը... Ո՛չ:

Այստեղ ոչ մի պաթետիզմ չկա: Նայենք մեր հայրենիքի քարտեզին: Խոստովանենք՝ արդյոք մեր մեջ կա մեկը, որն առավել տանջված է և անուշ ու չի մտածում. «Տեսնես էլի ի՞նչ ենք տալու թշնամուն»: Եվ այս բոլորը էլի՞ ենք հանդուրժում:

Բայց... Հայրենիքն անհամեմատ ավելի մեծ է, քան իր պոլիտեզիան թղթի վրա:

Հազար վայ թշնամուն, երբ Հայրենիքն իրենց սրտերում մասնիկ-մասնիկ պահողները միանան: Ահա այդ ժամ կմիանան նաև մեր բոլոր դրոշների ոգիները, և Հայոց աշխարհում կծածանվի ամենաբարձր եռագույնը:

Անդրանիկ
ՎԱՐՂՈՒՄՅԱՆ

Հովիկ Վարդումյանն իր գրչի հատու վրձնահարվածներով նոր էջ է բացել հայ ժամանակակից գրականության մեջ՝ միանգամայն նոր գույն ու շունչ բերելով արցախյան բազմազան գույների, սիրո անեզրական թեմայի, խոհափիլիսոփական մտքերի և հայի ճակատագրի իրեն բնորոշ պատկերացումներով:

Գրողին սնել է մարտական կենսագրությունը, մարտիկին անանձնական բարձրագույն իմացական լիցքեր է հաղորդել ստեղծագործ անհատը, և արդի հայ արձակը հարստացրել է Արցախյան գոյամարտը վկայող ու գեղարվեստական տարածքում արարողը: Անանձնական ազգային նրա իդեալների միջուկն է, այն է վերականգնել բոլոր ժամանակների հայկյան գարմի կորուստները, վերադարձնել հայկազուններին նախնիների նկարագրի հերոսականությունն ու հպարտությունը: Նպատակն իրագործելու համար նա կազմավորել է «Հայկազուններ» համահայկական միաբանությունը, որին պիտի անդամագրվի ողջ հայությունը:

Բեղմնավոր է Հովիկ Վարդումյանի գրիչը: Միայն վերջին տարիներին գրած վիպական գործերի («Կանթեղ», «Փող Սիերի վերադարձը», «Եթե մոռանաս, կանիծեմ քեզ», «Ուրֆայի հերոսամարտը») թեմատիկան փաստում է, որ արձակագրի հայացքն ուղղված է միաժամանակ անցյալին, ներկային և ապագային, իսկ ներկան ապրում է և վավերագրում է ամենակտրոֆ քաղաքացիական կեցվածքով՝ անմիջականորեն իր մասնակցությունը բերելով հայրենիքի բոլոր խնդիրների լուծմանը տարբեր ոլորտներում:

Հայության մի քանի սերունդ տեսավ Արցախյան ազատամարտի արդեն 3 երեսները: Մտքի, սրտի, և հոգու երկատումը դարձավ հանելուկ, որի պատասխանը գտնում ենք «Կանթեղ» վեպում: Գիշտ է կորստի ցավը չի մեղմանում, բայց կորուստները յուրովի են իմաստավորվում: Մարդու երկու տեսակների՝ արարողի և ավարառուի դարավոր կռիվը պարբերաբար զոհեր է պահանջում, ու հայ ժողովուրդը պարզապես դատապարտված է արարման դաշտում ապրելուն. այս ճշմարտությունը մեզ սովորեցրել է հայ գրականությունը:

«Կանթեղ» վեպը մեզ հաշտեցնում է ապրած և չապրած օրերի անգին կորուստների, կրած զրկաքնների հետ. վեպն իմաստավորում, արձանագրում ու պատմության համար պա-

հում է մեր անցյալի մի հատվածի փաստավավերագրական նկարագիրը: Վեպի նյութը «Սուր և խաչ» խոսուն անունը կրող մարտական ջոկատի կենսագրության մի հատվածն է, որն առնչվում է ոչ միայն ազգային գոյամարտի, այլև լավի ու վատի, բարու ու չարի հակամարտության դաշտին: Գիշտ այնպես, ինչպես լինում է հեքիաթում, բայց իրականում այդ պարագծերի մեջ տեղավորվում, շնչավորվում, ծնվում ու ապրում է ազգային մեծ միջը, առանց որի պարզապես կլինի մանկուտների գորշ զանգված: Ազգային գոյամարտի զինվորները և՛ մարտադաշտում, և՛ ստեղծագործելիս արարում ու իմաստավորում են այդ միջը:

Ինչո՞ւ «Սուր և խաչ», քանի որ մեր նշանաբանն է՝ Աստված և հայրենիք, առաջարկում են ջոկատն անվանել «Սուր և խաչ»: Բոլորը համաձայն էին և ուրախ՝ կրելու այդ խորհրդավոր անվանումը, որ խոր ու մեծ իմաստ ուներ:

Ապա Հակոբը բոլորին ցույց տվեց միմյանց ձուլված սրի ու խաչի գեղեցիկ նկարը և Արաքսին ու Աշխենին հանձնարարեց ստեղծագործելու սև մահուրի վրա: Չնայած խորհրդակցությունը վարողը վերջացել էր, ոչ ոք չէր ուզում հեռանալ: Բոլորը ոգևորված էին: Վերջապես եկել էր գործելու ժամանակը:

Վեպի մի քանի ցնցող տեսարաններ ընթերցողին տանում են ոչ հեռավոր անցյալ՝ 1915 թվական... Արցախյան գոյամարտի ճշմարտության այս շերտի մասին գրողը խոսում է շատ զգուշավոր՝ հավատարիմ մնալով արարող մարդու իր տեսակին, որ կռվի դաշտ է մտել հարկադրաբար, բայց նահանջել չի կարող, իրավունք չունի, և ինչ-որ չափով պարտավոր է անարի թշնամու դեմ երբեմն կիրառել նրա միջոցները, բայց միշտ ընտրելով, ոչ թե մեխանիկորեն կրկնելով ոսոխի գործողությունները, որոնք հաճախ հասնում ու անցնում են ոճիրի սահմանը: Հայաստանը դառնում է երկրագնդի կենտրոնը, խղճի զարկերակը:

Կռվի ասպետական օրենքները մեր ազատամարտի նորօրյա մարտիկները ժառանգել են հայ ֆիդայիներից, որոնք երբեք զենքը չօգտագործեցին անզենի դեմ: Սա հայ մարդու արարող տեսակի գոյության օրենքներն է՝ անխախտ ու կենսափորձով ստուգված, հաստատված: Մարդու ավարառու տեսակը չի փոխվում: Արարող տեսակը հար-

կադրված կերակրում է և՛ իրեն, և՛ ավարառուին: Բայց որպես հայի համառ տեսակի ոչ պակաս համառ ներկայացուցիչ՝ հաճախ հարցնում են՝ մինչև ե՞րբ և ինչո՞ւ: Բարեբախտաբար Հովիկ Վարդումյանը ավարառու այս տեսակը լավ գիտի, լավ է ճանաչում: Նա պարզապես արձանագրում է՝ անցած տասնամյակները ոչինչ չեն փոխել հարևան ժողովրդի անգիղջ համառության, նախամարդու բնագրով կացինը ձեռքն առնելու հոգեբանության և կեցվածքի մեջ: Լավ իմանալով պատմության կրկնության հանրահայտ տրամաբանությունը՝ պարտավոր ենք ամեն ինչ անել, որ թույլ չտանք այդ տրամաբանության իրականացումը, երբ խոսքը երկրի, ժողովրդի, Հայրենիքի մասին է: «Բայց այս ազգը դիմանալու է: Աշխարհը զարմանալու է նրա կայունության և հոգեկան հզոր ուժի վրա: Սակայն սա վերջին փորձությունն է: Երբեք չվիատվեք: Այս պատերազմում հաղթելու ենք: Բայց ավելի կատաղի է լինելու ներքին պատերազմը: Ձեր եղբայրները ձեզ թալանելու են, երկիրն ավերակ են դարձնելու ավելի, քան պատերազմը: Բայց նորից են ասում չվիատվեք: Այս ազգի մեջ է սերունդ, որից ծնվելու է նոր մարդը: Այս փոքրիկ, աննշան անկյունում: Այստեղ է ծնվելու Մանուկը: Այս փոքրիկ, աննշան անկյունում ապահովության բարեբեր տապանն է: Հազարավոր տարիներ առաջ այստեղ զգված սերունդ պահպանվել է այսօրվա համար: Եկել է ժամանակը, և այդ սերունդ ծիլ է տալու: Ձեր կյանքի գնով պաշտպանեք Մանուկի ծնունդը: Դրանից է կախված մարդկության ապագան»:

Վեպի գործողությունը ծավալվում է Մանուկն ծնունդի հետ կապված պատմության հետ: Ով եղել է Քանձասարում ու գիշերային մթության մեջ տեսել հպարտ եկեղեցու խրոխտ ուրվագիծը, վեպի սյուժեյն կրկնվի իրական գույներով: Ծնվում է Մանուկը, կատարվում է հրաշքերի հրաշքը: Մենք ծնվել ենք գալիքի պատասխանատվությունը կրելու համար և ծառայելու ենք միայն աստվածայինին, որի մարմնավորումը երկրի վրա նորածին Մանուկն է: Եթե ամեն մեկս հստակ գիտակցենք աստվածային հատկի գոյությունը մեր մեջ, տեր լինենք ու տեր զգանք տանը, երկրում մեր հայրենիքում էլ կլինի արդարություն, որն աստվածայինի անդրադարձն է ժողովուրդների կյանքում: Առանց արդարության ոչ մի երկիր հայրենիք չի դառնում, առավել ևս՝ Հայի ու



Հայության Հայրենիք: «Քո սերունդից է ծնվելու Մարդը: Եվ լավ հիշիր՝ ինչ էլ լինի, չտանես այս հողից: Վաղը պատերազմ կսկսվի, և հասակ կառնի այս հողի վրա: Այս հողը և այս ժողովուրդն է մարդու ծնունդի արագույնը: Աստված միշտ քեզ հետ է... Հայկը ծնվեց նոր օրվա շեմին: Այդ օրվանից սկսվում էր նոր ժամանակի հաշիվը: Նոր մարդու առաջին ճիշը համընկավ արևածագի հետ»:

Նոր մարդու ծնունդը վաղուց էր նախապատրաստվում, տասնյակ հազարավոր, երբեմն հարյուր հազարավոր տարիներ սերնդից սերունդ, ազգից ազգ, ժողովրդից ժողովուրդ փոխանցելով, սիրով, նվիրումով, հոգատարությամբ միշտ պատրաստվում էր նոր սերունդ և մի սովորական, անսպասելի, ոչ մեկից չտարբերվող մի օր ծնվում էր Նոր մարդը: Եվ այդ լինում էր մի անսպասելի ժամանակ, այնպիսի անսպասելի տեղում, որ ոչ ոք չէր կարող բացահայտել: Ահա հայ ազգն է, որ Աստծու լույսը ձեռքում պահած՝ գնում է դարերի միջով: Հարկավոր է վերջնականապես ոչնչացնել, ջնջել աշխարհի երեսից, ծնած պտուղն էր հետը ոչնչանա, բայց ծնունդը եղել էր: Բացահայտ էր:

«Կանթեղում» միահյուսված են հորինվածքն ու վավերագրությունը, իրականությունն ու միստիկան: Առեղծվածային Մանուկի ծննդյան շուրջ հյուսվող պատմությանը զուգահեռ, օրաթերթի հողված հիշեցնող հատվածներ կան հայտնի կուսակցությունների դերակատարումների մասին... Այդպիսին էր պատերազմը. հրաշքն ու իրականությունը, առասպելն ու առօրյան միահյուսված էին: Հեղինակի աչքի առաջ միայն արյունից շինված հայը հրաշքեր էր գործում: Եվ ընդհանրապես առանց հրաշքի հաղթանակ չի լինում...
«Այս անտանելի ազգին ինչ-

աշակերտներ՝ դիակի առջևով քայլող, մոմեղեն և քար շուրթեր՝ մխիթարող արտադրանքներ: Հանկարծ հիշում եմ մահը կյանքի ժլատ կերպարն է:

Ծաղկեպսակներն ընդհատում են շտապողականությունն ու վախը զգացմունքների ուղեղնում: Անօգուտ բառերը մանուշակագույն ծաղկաթերթեր են: Քո աշակերտները երբեք չեն մոռանա քեզ: Ինձ համար էլ հստակ էր. ես երբեք չմոռացա այդ օրը, Թակարդված մոմերի ծխում մնան չոր խոտի, նրա դագաղի հանդիսավոր փայտը, մաշկի թշվառ պիտակը մահվան երկրային քողարկումն էին...

ԿՈՆՉԱ ՊԱՐՄԻԱ

ԳԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԳԵՂԵՑԻԿ ՊԱՐՏՆԻՔԸ

Ազատի՛ր իմ հողապատնեշները...

Նրանք այլևս չեն կարող բերնեբերան լցվել ջրով. Խեղաթյուրել են ձևը նրանց, և չոր խոտն է երևում որոշ ծերպերի արանքում: Անձրևներն ու աշունները չեն կարող համակել ինձ, իմ անկանոն ձևը խտացել է, և նա, ով քայլում է իմ վրայով, հոգնում է...

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Մի կաթսա, որ մի օր թողեցի խոհանոցի մարմարին: ...Չբնակեցված վայրում երկար տարիներ պահեցի կահկարասին: Եվ այն բացելիս ես արդեն ուրիշ էի: Ես տեսա բորբոս, Տեսա ժանգ, տեսա խճճված կտորներ լողացող գարշահոտ ջրում: Տեսա կաթսայի ձևը մախնական, Տանտիրուհու հայացքով գննեցի տեղանքը, և ժամանակը շուտ եկավ ինձ վրա. նույն շենքը, նույն փողոցը, նույն աքացիաները:

Կաթսայի գարշահոտն այնքան ուժեղ էր, որ գնացի դեպի պատուհանը՝ շնչելու: Փողոցին նայելիս տեսա նույն մարդկանց, նույն կեցվածքը, նույն գրույցները: Ամեն ինչ նույնը տեսա: Դատարկեցի գարշահոտ հեղուկը և սրբեցի հախճապակին մի հին քրջով, որն անեացավ մատներիս արանքում:

ԼՈՒՆԱ ՄԻԳԵԼ

ԱՐՄԱՎԵՆԻՆԵՐ

Ճանապարհին՝ ազարակ արմավենիների, որոնցում լույսն է աճում: Ինչպե՞ս է կոչվում սպանդանոցը ծաղիկների ... Ես դրանք բոլորը դրել եմ շուրթերիս և ուրիշ ոչինչ չեմ ուզում: Կարմիր եմ. պարզապես շրթունքներ եմ... Էլեկտրական երաժշտությունն ամենից քիչ է ցավեցնում... Ճանապարհին՝ արմավենիների

ազարակ. Կանուսանալի նրանցով շրջապատված: Գործարաններ: Ծուխը: Ծուխը: Այստեղ ստորագրում եմ վախը, երբ դրսում եմ: Ծուխը: Ծուխը: Ոչ ոք չգիտի՝ ինչի է մնան հայելին, նույնիսկ կատուները, որոնք իրենց աչքերով փնտրում են գիշերը: Ես լույսն եմ տեսել, Տեսել եմ ավելին, քան լույսը՝ Իր ճկուն շնչերակներով՝ արմավենիների մեջ... Հարթեցնենք արմավենիները մեր ամառային կոշիկներով... Կատուներն իրենց աչքերում աստվածներ ունեն- լույսն իմ մարմնի գույնն է:

Աշխարհը չի կարող կործանվել հիմա: Չի կարող կործանվել: Ես քեզ համար գնել եմ արծաթե մատանի, որ երբեք չկորցնես այն:


Վերցրու և նվաճիր քո աչքերը: Դիր և դիր քո աչքերը: «Մահը չի կարող փորձարկված լինել ո՛չ ողջերի, ո՛չ էլ մեռածների կողմից»,- գրել է Վիլյամ Վոլլմանը: Այս պատուհանի տարօրինակ պարզությունը Ինձ հիշեցնում է մեծ համաճարակի մասին: Միայն թե այն ավարտվի:

Ասա՛ ինձ՝ այդ ժամանակ ի՞նչ կնշանակի մնալ միայնակ:

Իսպաներենից թարգմանությունը՝ Սիրանուշ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ԳԵՐԱՍ (ԿԱՐԱՊԵՏ) ԳՅՈՎՉԱԿՅԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԲՆՕՐՐԱՆ



Յոթամյա կրթությունն ստացել է Գյումրու Պուշկինի անվան դպրոցում (նախկինում՝ Օլգինյան գիմնազիա): Առաջին ծանոթությունը արվեստին տեղի է ունեցել ծննդավայրի նկարչական ստուդիայում: 1930-ին ընտանիքով տեղափոխվում են Երևան, որտեղ էլ սովորել է Գեղարվեստի ուսումնարանում: Այն ավարտելուց հետո որպես լավագույն շրջանավարտ՝ մեկնել է Լենինգրադ՝ Ռեպինի անվան ինստիտուտում ուսումը շարունակելու: 1940-ին շինծու մեղադրանքով բանտարկվել է: 1948-51թթ. ապրել է Հայաստանում, ապա Տանքովում, զբաղվել է թատերական ձևավորմամբ, մասնակցել ցուցահանդեսների: 1956-ին արդարացվել է և հնարավորություն ստացել ուսումը ավարտելու Ռեպինի անվան ինստիտուտում: 1965-78թթ. գրաֆիկա է դասավանդել Լենինգրադի Մուխոմախի անվան գեղարվեստական ուսումնարանում: Գերասի արվեստն ունի խոր շերտեր: Դրանք տառապանքից ու ցավից ծնված ստեղծագործություններ են: Ամեն ոք ուժ չէր գտնի աքսորում անցկացրած տարիներից հետո շարունակել գնալ երազանքի հետևից: Սակայն այդ տարիները թողեցին իրենց կնիքը ստեղծագործողի հոգում: Դրանք վեհացրին ցավն ու տառապանքը, տիրությունն ու մտահոգությունը, որոնք ամփոփված են Գերասի կերպարների մարմնաձևերում, կծկված ֆիզուրներում, գորշ ու մռայլ գույ-

ներում: Այս ամենի մեջ կա նաև խորքային կենսասիրություն. չէ՞ որ խավարին հաջորդում է լույսը, ցավին ու տառապանքին՝ երջանկությունը: Նկարիչը նախընտրում է պարուրվել խավարի մեջ, իջնել կյանքի հատակը՝ ցույց տալու համար, որ վերևում լույս կա, սեր կա ու կյանք: Ստիպում է վերանայել կյանքն ու սիրել ապրած յուրաքանչյուր վայրկյանը: Գերասի գործերը մեծ ընդհանրություններ են՝ փոքր չափերի մեջ կատարված: Նկարիչն այնպես է ընդհանրացնում երևույթը, հասարակ մարդուն, սովորական թվացող իրողությունը, որ հանգեցնում է բանաձևման: Պատահական չէ, որ շատ երևույթներ ճանաչելի են այսօրվա դիտակետից. ասես տարածությունն ու ժամանակը կանգ են առել: Լինելով համեստ, խոր աշխարհակալման տեր՝ Գերասն ուներ կայուն ու ամբողջական աշխարհայացք: Նա, անցնելով բազում փորձությունների միջով, պահպանում էր բնական մաքրությունն ու ոգեղեն էությունը: Բնակվելով ռուսական քաղաքներում՝ Գյուկակյանը հավատարիմ էր մնում իր ազգային նկարագրին ու սեփական ձեռագրին: Ժամանակի թելադրված «խստաշունչ ոճը» շատերի համար դարձավ պարտադրանք, մտածողության ձև. այս շրջանի նրա գործերը որոշակիորեն կաշկանդված են: Սակայն Գերասը գերադասում էր նկարել կոմպոզիցիաներ, որոնցում պարտադրված չէր գովերգելու խորհրդային մարդու սխրանքն ու հերոսացնե-

լու նրա կերպարը: Ապրելով հայրենիքից հեռու՝ Գերասը երբեք չի կորցրել սեփական «ես»-ի ու արմատների զգացողությունը, երբեք չի ենթարկվել իշխող գաղափարախոսությանը, չի նկարել մոդայիկ թեմաներ: Իր ստեղծագործությամբ հաճախ է անդրադարձել Լենինականին՝ մտովի դառնալով իր մանկության վերհուշին: Այստեղ նա դառնում է ավելի օրգանական, ամբողջական ու նրբազգաց: Հայրենի քաղաքի ամեն քարն ու ծառը նրա մեջ արթնացնում են հիշողություններ, կապում անցյալը ներկային ու ծնունդ ապագայի կանխագագուցումներ: «Չմեռ» (1940) կտավը կառուցված է մոխրագույն-արծաթագույն գունաշարով: Ցածրիկ գորշ տները արթնացնում են հուշեր, մտապատկերներ: «Երկրաշարժը» (1989) նկարչի կարտուն է, սիրտ խոստովանությունը սիրելի քաղաքին, որը նա թողել էր, բայց որի հետ հոգևոր կապը երբեք չէր խզվել: Դարչնամոխրագույն ֆոնին պատկերված է միայնակ կին, որի դեմքին չկան սարսափ, խուճապ: Միայն աջ մասում պատկերված փլատակներն են բացահայտում նկարի էությունը: Նկարիչը լավ գիտի իր հայրենակիցների խոր իմաստությունը. տառապանքը սուբլիմավորելու, վերափոխելու ունակությունը: «Գյումրի» (1978) կտավում հայրենի քաղաքի ճարտարապետությունը ծառայում է իբրև հետնապատկեր ծեր կնոջ համար: Առաջին պլանում պատկերված տաշտակն ասես պատմում է կնոջ

զբաղմունքի մասին: Իսկ նրա կրթված, ներքև հակված դեմքը ամբողջացնում է մի ողջ սերնդի պատմություն: Նկարը «Լուռ» է, ավելի խոսում իր գորշ դարչնագույն գունաշարով: Համեստ նկարիչը, թողնելով ստեղծագործական մեծ ժառանգություն, երկար տարիներ չի համարձակվել ցուցադրվել: Հայաստանի ազգային պատկերասրահում նրա ցուցահանդեսը տեղի է ունեցել 2002թ., իսկ ներկայացված 82 գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքները այրին՝ Վերա Բելովան, նվիրել է նկարչի հայրենիքին: Նրա ստեղծագործությունների մի փոքրիկ, բայց արժեքավոր մաս էլ գտնվում է Գյումրու «Ստիլ» գրաֆիկայի կենտրոնում: Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սրաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ



ՄԵՆԱԿ ԻՐԱՆ ԲՆՈՐՈՇ ԽՆԴԱՎՈՒ ՀՈՏԻ ՄԵՋ ԿԿԼՈՐՆԱՆ ԻՐ ՊՈԼՈՁ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԿԱՅԱՑԱԿ «ՄԱՅԼԻՑ ՄԱՅԼԱ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԳԵՍԸ

հանդեսը կայացավ Գյումրիում Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնում, որտեղ Լիլիթը անժամոք մեկը չէր: Դեռ 2014-ին էր այստեղ հյուրընկալվել էր Շուշիի պետական տիկնիկային թատրոնի հետ: «Երեկ խոզուկներն» էին ներկայացնում: Երկրորդ այցը եղավ 44-օրյա պատերազմից հետո: Շուշիում կորցնելով տունն ու աշխատանքը՝ Լիլիթը վերադարձել էր Գյումրի և քայլերն ուղղել իրեն ծանոթ

րիի դեսպանը Շուշիում»,- կարճ իր և Լիլիթի ծանոթությունն է ձևակերպում:

«Իր առաջին գրքի շնորհանդեսը մենք կազմակերպել ենք Լիբանանում, և ուրախ են, որ երկրորդին ներկա եղա: Բարձր են զնախառում նրա կոլորիտով լի հուշագրությունները, մանավանդ որ գրված է Գյումրվա բարբառով: Այս բարբառը շատ մոտ է արևմտահայերենին, թերևս դա իր դրական ազդակն ունեցավ, որ մտավորականները կարողացան քիչ թե շատ ընկալել:

Սիյունքն ընկալեց, ժաշկեն տեսարան կար անկե, բաղնիքի մասին կը պատմվիր, կամ պատեն կախված տեր բարբայի նկարի: Այն բոլոր սիյունքախայերը, որոնք այդ օրերում հետևած են և արցախյան շարժմանը, և Գյումրիի վիճակին, պիտի հոգիի կանչով կարողանան ճախրիլ և ընկալիլ»,- ասում է Ջաքարը:

Գիրքը ձևավորել է Աշոտ Զակոբյանը: Ասում է պարտքի պես բան էր, երկրաշարժը տեսնել, ապրելուց հետո ցանկացել է ինքն էլ իր լուսնան ունենալ:

«Եթե եղ ամեն ինչի միջով չանցած մեկն ուզենար անել, չէր ստացվի», -վստահ է Աշոտը:

Սամսոն ՄԱՏԻՆՅԱՆ

ՀԱՆՎԱԼԵՆ ԷՆ ԵՆ ԽՆՁՈՐ /«Մայլից մայլա» գրքից/

Եթե հարսի հերանց տուն առավոտ կանուխ կարմիր խնձորով սինիներ չէին պարե, ըղիկ կնշանակեր, որ ինչ արագությամբ հարսը հասել էր կեսրանց տուն, նույն արագությամբ էլ ժամկետն անցած ապառաժի պես հետ կդառնար: Եղ կարմիր խնձորի սինին տան կնիկ դառնալու ամենակարևոր փաստաթուղթն էր. ըղորով աղջկա տերը, գլուխը վեր, բոյի քաղաքը քելեր, ըղիկ բոյի հագար ու մե՛ հարևանի չար բերնին կարմիր օղակ քցեր: Բայց եթե եղ խաբարը գուշանար, սաղ մտած ունեքների մեջ կընզներին: Ծանոթ ու անծանոթներն էլ լեզանդներ կհորհներին ու բերնեբերան պատմելով հարսի թախումին գետնի օխտը տակը կկոխեին:

Ամեն մայլա տունը մնացած մե՛ աղջիկը կեղներ, որ սիրուն ժպիտով կուղեկցեր հարսքվորներին ու քթի տակ անուշ անեծք կուղար.

-Ինչ շուխուռով որ կտանիք, նույն շուխուռով էլ ետ բերեք:

Դե սաղին չէր կանի ըսիկ, բայց ուն օր կկայներ, կռնար հանգիստ բուռը շիբին լցեր բերանը: Դերանց տուն հետ էգած աղջիկը մենակ իրա տնեցունց հըմար չէր ջառնա: Թե մայլի մեջ նման դեպքերը կկրկնվեին, մայլեն կստանար համարժեք մակնունդ՝ տարած-հետ բերածների թաղ, ու ինքնաբերաբար էր կազդեր ըղտեղ ապրող մեզել աղջիկների ռեյտինգի վրա:

Ինչքան էլ համեստ հարսնիք

էղներ, իրեք հատ մաշինա կճարեին. մեկի դոշին՝ աղվես, մեզելին՝ կուկլա, վերջինն էլ՝ քալորենց տանել-բերելու հըմար: Դեռ բերելուց էլ էր իրեք մաշիններն էին, բայց արդեն վրեժը յորդանդուշակ կապած:

Երկու կողմն էլ կբացեին պատմական բլուկնոտները ու մեկ առ մեկ իրար երեսի կճվային հարսնքի վախտ պարզցնելով նվեր տված ապրանքների գները: Գարսի թարաֆը մեկ չհաջողած գիշերվա հըմար փոխհատուցում կպահանջեր օսկեդեմը, փեսի կողմն էլ կպահանջեր իրա էրած ծախսի վերադարձը: Ես պատերազմի առավելությունը հիմնականում փեսի կողմն էր՝ համ հարսի անունն էր իրանց ծեռը, համ էլ բերած օծիտը: Ինքնաբերաբար սաղ կռիվը կդառնար ապրանքի բուլորը, ու հեջ մեկը չէր մտածե՛ ճեղքած ճակատագրերի մասին: Ես պատերազմի մեջ սպիտակ դռնակակիրներ մենակ կեսրարներն էին, իրանք միշտ կողմ էին մե՛ քանին գիշեր էլ փորձելու, կմտածեին, որ կարծիքն ջախելները իրար ու ամուր ընտանիք կդառնան: Բայց կիսուրներն ու տալերը անդրդվելի էին. շուտշուտ կկպչեին սինու հըմար նախատեսված կարմիր խնձորներն ու առանձին-առանձին ցուցակներով խոռոց կենեին, որ հանկարծ բան բաց չթողան: Ես գործի ընթացքում էլ մեջ կբերեին հին ծանոթների անունները, ովքեր հասած աղջիկներ ունեին ու կորոշեին, թե մեզել կողմի սիրտը էլ բեղար մըմնջնելու հըմար գալող բաբաթ ո'ր մեկից բոյի էրթան աղջիկ ուզելու:

Ես գործի ընթացքում էլ մեջ կբերեին հին ծանոթների անունները, ովքեր հասած աղջիկներ ունեին ու կորոշեին, թե մեզել կողմի սիրտը էլ բեղար մըմնջնելու հըմար գալող բաբաթ ո'ր մեկից բոյի էրթան աղջիկ ուզելու:

Ես գործի ընթացքում էլ մեջ կբերեին հին ծանոթների անունները, ովքեր հասած աղջիկներ ունեին ու կորոշեին, թե մեզել կողմի սիրտը էլ բեղար մըմնջնելու հըմար գալող բաբաթ ո'ր մեկից բոյի էրթան աղջիկ ուզելու:

Լեննագան տեղ տղի հըմար երկրորդ, երրորդ ու հինգերորդ անգամ հարս տուն բերելը հեջ խնդիր չէր: Վատ երազի նման ջրին կպատմեին ու կմոռնային էղ մե՛ գիշերվա պատմությունը: Կոճա պատահեր, որ անունով ընտանիքները էլ աղջիկ չտային բաժմաված տղին, բայց կողքի գեղերի աղջիկները խո յավվար էին քաղաք հարս գալուն: Բայց դե հետ տարած աղջկա ճակատին կարմիր պեչատով ընդմիշտ կգարգեին «դուս ընգած»-ի յառուկը ու կդասեին պահեստայինների շարքը: Եղ աղջիկները մեզել կռնային իրանց կյանքը դասավորել մենակ կնիզը մեռած տղամարդկանց հետ. իրանց էլ անցյալ չէր հետաքրքրե, էնքան օր էրեխեքի վրա-գլուխը մաքրող էղներ:

Բաժինքն օր շատ կեղներ, նվերներն էլ՝ խիստ վիճելի, բանը կհասներ դատարան: Առաջին օրվա տարած մեխակներից ու կոնյակի փողից սկսած մինչև աջքի լուսանք բաժնած կանֆետները կներկայացնեին դատավորի ուշադրությանը: Դատարանի ճամփին էլ նոր-նոր կնայեին հարսի երեսին ու կհասկնային, օր աչքերը բզով է ծագած, երեսը քյավգիրով զազառ է, ոտներն էլ՝ կոնդ, ու ըղթանի հետ մեկտեղ՝ չբեր:

Որպես կանոն՝ մայլի «ամենամանուսով» կնիզը վկա կզվեր ու թաք-թաք կպատմեր, թե որ օրը, ինչ մաշնով ու ում հետ է տվյալ «հանցագործը» քաղաք ման էգել: Եղ վախտերը հմիկվա տեխնիկական չկար, բայց կանեռն, նավիգատորը, գուզըլը ու օդնակասնիկը մայլի կնզղտանց քովը գլուխները քարն էին տվել: Ճշտունները սկսելով պոռը կոռողից հարի պապի թաղման քելեխի լիմոնատի քանակը՝ կհետևեին, կֆիքսեին ու խաբարը դոխերի հետ կորգեին խնամոնց երդիկ:

Աղջկա կողմի ժողովուրդն էլ տղի բոյ ու բուսաթից (հեջ մեկս էլ հարի հըմի չհասկցանք, թե էղ բուսաթը որն է), գյոռմամիշ բարեկամներից ու մանկամիտ էղնելուց կբողբեին, ծեռի հետ էլ թաք-թաք կհիշեին, թե իրանց աղջիկն ինչ ուզողներ է ունեցե ու միամիտ զնացել նախիրի մեջից իշու ճակատն է պաչե (ես խորաթն սեքսիզոտ է, այսինքն՝ տղեքից ում ճակատն էլ պաչե, նախիրի անդամ բոյի դուրս գար, պոռոտը մենակ է՜ի անունն էր ելած): Ինչքան էլ մեկը մյուսին անուններ կպցնեին վերջնական այիբները կեղներ՝ չբերն ու ալկաշ-ալանքաշը: Մե՛ գիշերվա հետազոտության կաչուն դիագնոզները կդառնային դատարանի վերջնական մեղադրանքների ու կյանքի ուղեկիցներ կեղներին:

Առաջին վկան քավորը կեղներ. դե ինքը ի պաշտոնե բոյի սաղ մանրուքներին ծանոթ էղներ: Բայց քանի օր «քավոր» տարրի մեջ տեսակըմ սրբոտ բան կար, հիմնականում չեզոք դիրք կբռնեին: Անվիճելի ու ոչ մե՛ առարկություն չընդունող խորաթն, թե աղջիկը չկտրած ծներուկ է, ու ինչ իմանա՞ս գլխիդ գալիքը, երգու ռուպանոց լռություն կիջըցնեի դատարանի դախիծի վրա: Սաղ մտովի կպատկերացնեին կարմիր, հյուսեղ ծներուկը, սրտերը կհոժնար ու թագա թափ առած կհարձակվեին իրար վրա: Ընկեր դատավորը արդեն սովոր էր նման կռիվների ու գիտեր, որ իրա դրոշումն էրգու կողմն էլ դռոշակ բոյի սարքեին ու ծանոթ-անծանոթի լուսը կոխեին, թե տես՝ ես բան չեմ ըսե, ինչ ըսելու է, դատավորն է ըսել:

- Ընկեր դատավոր ջան, բանըմ էրա, թող էս բոշեքը համոզվին, օր աղջիկըս չբեր չէ, - աղաչելով կըսեր աղջկա մերը:

- Քաղաքացի՛, Չեր փեսեն դա ապացուցելու հըմար մի ամբողջ գիշեր ունեք:

- Չեմ չէ, մի ամբողջ գիշեր,- իրար կխառնվեր կիսուրը,- ընկեր դատավոր, ըղիկ հինգ ռուպեի բան է: Եթե չբեր չեղներ, ես առավոտ իրա աչքերից կզազայի, օր հղի է:

Խեղճ աղջիկը հինգ էրեխա էլ բերած էղներ, մեկ է, ամեն անգամ հետևից բոյի խայթեին, թե տես՝ չբեր անդերը ինչը մեզի խաբեց, խախից էրեխա բերեց:



ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

Կյանքը գյումրեցի արձակագիր Լիլիթին Արցախ տարավ յոթ տարի առաջ:

Շուշիի թատրոնի կողմից աշխատանքի առաջարկն ստանալուն պես վայրկյան անգամ չէր կորցրել, տեղափոխվել էր հայոց բերդաքաղաք: Դեռ Շուշիում ապրած տարիներին էլ գրեց հայրենի քաղաքի Գյումրու մասին:

Լիլիթն Արցախ զնաց սեփական կամքով ու սրտի թելադրանքով: Պատերազանը, սակայն, նրան կրկին Գյումրի ուղեկցեց: Շուշին այսօր հայերի վերահսկողության ներքո չէ, սակայն այնտեղ ծնված «Մայլից մայլա» գիրքը Լիլիթը կարողացավ դնել ընթերցողի սեղանին:

«Լեննագանի հոտն ուրիշ է, ամեն մայլա մտնելով՝ կզգաս, թե ըղտեղ ինչ արհեստավոր կապրի: Լեննագանիս հոտն էլ հիշողություն ունի. չերտ-չերտ իրար վրա շարված՝ մեզի կպատմե, թե ինչ է ապրել քաղաքը՝ թոզի, մանած բրդի, ցեխ ու չամուռի, մատղաշ ծառի ճյուղի, թագա թխած հացի, նոր պոկած խոտի, լվացած ասֆալտի ու մենակ իրան բնորոշ խնդալու հոտի մեջ կկլորնան իրա պոլոզ պատմությունները»: Սա «Մայլից մայլա» գրքից մի փոքրիկ հատված է:

Լիլիթ Սկրտչյանը Գյումրու մասին այս պատմվածքների ժողովածուն գրեց ու ավարտեց Շուշիում, շնորհանդեսն էլ էր այնտեղ կայանալու: Պատերազանը, սակայն, այլ ուղիով տարավ Լիլիթին էլ, նրա ստեղծագործական միտքն էլ, գիրքն էլ:

«Մայլից մայլա» գրքի շնոր-

հաստատություններ:
«Լիլիթը մեզ մոտ դասընթացի էր մասնակցում, և շատ պատահական իմացա, որ գիրքն արդեն ավարտուն տեսքի է ու պետք է Շուշիում շնորհանդեսը կայացած լիներ: Առաջարկեցի, որ հենց Սոցիալ-կրթական կենտրոնում կազմակերպենք իր համար այդ կարևոր միջոցառումը: Համաձայնեց: Նաև մի խորհրդանշական ակնարկ են ուզում անել: Մեր կենտրոնի շենքը Գյումրու նախկին բաղնիքի շենքն է եղել: Լիլիթն իր գրքում այս բաղնիքի մասին ևս պատմում է: Դա էլ էր մի առիթ, որ շնորհանդեսն այստեղ անեինք ու հյուրերին ընդունեինք»,-գրույցում ասաց Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի կառավարիչ Կարինե Գյաղուկյանը:

«Գիրքը ներառում է երկու բաժին՝ «Մայլից մայլա» և «10.950 օր երկրաշարժ»: Մեր պատմությունն է, մեր ապրածն է: Ոչ մի չափազանցություն չկա: Բայց շատերը գուտ հուճորն են հասկանում, ցավը չեն նկատում: Երևի պիտի ապրած, անցած լինեն, որ հասկանան»,- նկատում է Լիլիթը:

Գյումրվա բարբառով գրված պատմությունները շատերն ամբողջովին չեն ընկալում, իմաստ կա, որ չեն կարողանում հասկանալ, Գյումրու հանգն ու երանգը որսալ:

Բայց Լիբանանում լավ են հասկանում Լիլիթի լեզուն: Այս մասին վկայում է շնորհանդեսին ներկա Լիբանանի պետական կոնսերվատորիայի դասախոս, Շուշիի պատվավոր քաղաքացի, Արցախի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Ջաքար Թեշիշյանը:

«Լիլիթին ծանոթ են իբրև շուշեցի դարձած գյումրեցու, Գյում-

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղը:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլէրոարդր Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Ձ տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 1 տպագրական մանուկ